Ռուզան Հ. Վիրաբյան

ԳՈՅԱԿԱՆԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ*

Մուտք

Համադրական են կոչվում մեկից ավելի հիմնական ձևույթների կամ բառ-բաղադրիչների միացությամբ կազմված բարդությունները, որոնք, ի տարբերություն վերլուծական բարդությունների, բաղադրիչների ավելի սերտ միասնություն են կազմում և լեզվում գործածվում են իբրև մեկ ամբողջություն՝ միաձույլ բառային միավորներ:

Այս առումով համադրական բարդությունները չեն տարբերվում պարզ և ածանցավոր բառերից ու դրանց նման մի ընդհանուր շեշտ են ունենում, օրինակ՝ գյուղատնտես, մայրաքաղաք և այլն, ուստիև կիրառվում են միաձույլ հնչյունական կազմ ունեցող բառերին հատուկ բոլոր գործառույթներով[1]:

Համադրական բարդությունները, կազմվելով տարբեր խոսքի մասերի պատկանող բառերի բազմատեսակ հիմնական ձևույթների միացությամբ, մեծ տեղ են գրավում հայոց լեզվի ընդհանուր բառապաշարի մեջ: Բառաբարդման այս եղանակը բավական գործուն է նրանով, որ շարունակում են կազմվել բազմաքանակ բարդ բառեր: Գոյություն ունեն.

ա) երկբաղադրիչ բարդություններ, որոնք, այլ ձևույթների կամ բառերի հետ բաղադրվելով, նոր իսկական բարդություններ են կազմում, օրինակ՝ հեռագրագիծ, հեռագրագիր, հեռագրատուն, հեռագրալար, հեռագրասյուն: Մի շարք այդպիսի բարդություններ են՝ երկաթուղի (երկաթուղագիծ, երկաթուղամերձ), զուգահեռ (զուգահեռագիծ, զուգահեռանիստ), լրագիր (լրագրաթերթ, լրագրավաճառ), ձեռագիր (ձեռագրատուն, ձեռագրացուցակ) և այլն,

բ) երկբաղադրիչ բարդություններ, որոնք ածանցվելով են կազմում բազմաքանակ բաղադրյալ բառեր, օրինակ՝ բարեկամ-բարեկամուհի-բարեկամություն, գործակից-համա-գործակից-համագործակցություն, կազմակերպ-կազմակերպիչ-կազմակերպվածություն-կազմակերպում և

*Հոդվածն ընդունվել է տպագրության 12.12.2012:

1 Տես **Մարգարյան Ա.,** Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 108:

այլն,

գ) երկբաղադրիչ բարդություններ, որոնք վերջավորվում են հար, հան, թափ, խեղդ, արկ, բեկ, դարձ, ընկեց, թաթախ, լվա, լույծ, խաբ, խույզ, կոծ, մուխ և այլ բայական բաղադրիչներով, հարադրվում են անել, լինել բայերի հետ՝ կազմելով հարադրավոր բայեր[2], օրինակ՝ թևաթափ անել, մատնացույց անել, ուշագնաց լինել և այլն,

դ) երկբաղադրիչ բարդություններ, որոնք հանդես են գալիս վանկաբառային հապավումների կազմում, օրինակ՝ պետապահովագրություն, պետհամարանիշ, տեխխմբագիր, քաղկազմակերպիչ և այլն. տարբեր բաղադրիչների սերտ միացությամբ կազմվում են ոչ միայն սովորական կամ հասարակ, այլև բազմատեսակ հատուկ անուններ, օրինակ՝ Այգեձոր, Եղեգնաձոր, Լեռնաշեն, Նորագավիթ, Նորավանք, Քարաշեն և այլն,

ե) տարբեր հոլովներով, օրինակ՝ անտառաբնակ, աստղագնաց= դեպի աստղերը գնացող, լեռնաբնակ = լեռներում բնակվող և այլն:

Բարդություններն իրենց բաղադրիչների միջև դրսևորում են իմաստային և շարահյուսական բազմազան կապեր ու հարաբերություններ: Գոյական, ածական և բայական գերադաս բաղադրիչ անդամները, միանման խոսքիմասային իմաստ ունեցող լրացումներ առնելով, տարաբնույթ կամ մեծ մասամբ տարբեր շարահյուսական հարաբերություններ են արտահայտում: Այն բարդությունները, որոնց գերադաս անդամը գոյական է, բաղադրիչների այնպիսի հարաբերություններ են արտահայտում, ինչպիսիք հատուկ են բառակապակցություններին: Սա նշանակում է, որ բարդության առաջին բաղադրիչ անդամը՝ գոյականը, ածականը, թվականը և այլն, ստորադասվում է գոյականով գերադաս անդամին և դրա հետ արտահայտում հիմնականում շարահյուսական երկու՝ հատկացուցիչ-հատկացյալի կամ որոշիչ-որոշյալի հարաբերություն[3]:

Այսպես՝

1)հատկացուցչի և հատկացյալի հարաբերություն են արտահայտում.

ա) գոյական+գոյական բաղադրիչներով կազմված բարդությունները, օրինակ՝ անձրևաջուր= անձրևի ջուր, թանաքաման = թանաքի աման, ծովեզր = ծովի եզր և այլն,

բ) թվական+գոյական, որոնցում առաջինը՝ թվական բաղադրիչը, գործածվում է փոխանվանական (գոյականի) նշանակությամբ, օրինակ՝ հազարապետ = հազարի՝ հազար հոգուց բաղկացած խմբի պետ, հազարապետ, միլիոնատեր = միլիոն (ներ) ի տեր, տասնապետ և այլն,

գ) բայ+գոյական, օրինակ՝ աշխատասենյակ = աշխատելու սենյակ, գրասեղան, զբոսավայր, ճեմասրահ, քննաշրջան և այլն,

2) որոշիչ – որոշյալի հարաբերություններ են արտահայտում.

ա) ածական+գոյական բաղադրիչներով կազմվող բոլոր բարդությունները, օրինակ՝ բարձրավանդակ (ինչպիսի՞ վանդակ, բարձր), ներքնազգեստ, վերնաշապիկ և այլն:

Գոյականն իբրև բայ-բաղադրիչի լրացում, գործածվում է.

ա) ենթակայի նշանակությամբ, օրինակ՝ անդամալույծ, արևածաղիկ,

---

2 Տես **Մարգարյան Ա.,** Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 94:

3 Տես **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 202:

լուսաբաց և այլն,

բ) ուղիղ խնդիր նշանակությամբ, օրինակ՝ բանաստեղծ, գրագիր, լրաբեր, կոշկակար, ձկնորս և այլն,

գ) հանգման անուղղակի խնդրի նշանակությամբ, օրինակ՝ ժամանակակից, չափահաս, ուսումնավարժ և այլն,

դ) միջոցի անուղղակի խնդրի նշանակությամբ, օրինակ՝ աստղազարդ, դանակահար, նավագնաց և այլն:

2.Հոդակապով բարդությունների կազմավորումներ

Այն բարդությունները, որոնց բաղադրիչներն իրար միանում են հոդակապով, կոչվում են հոդակապով բարդություններ. օրինակ՝ լրագիր, լուսանկարչատուն, հեռախոսափող և նման բառերը հոդակապով իսկական բարդություններ են, որովհետև նրանց լր (<լուր) և գիր, լուս (<լույս), նկարչ (<նկարիչ) և տուն բաղադրիչներն իրար հետ կապվել են ա ձայնավորով:

Բարդության բաղադրիչներն իրար կապող ձայնավորը կոչվում է հոդակապ: Ժամանակակից հայերենի ամենագործուն հոդակապը ա ձայնավոր հնչյունն է: Ա հոդակապը, իմաստ չունենալով, լեզվում բառակազմիչ դեր է կատարում: Ա հոդակապը մի այնպիսի լեզվական միավոր է, որը իրար է կապում բազմատեսակ բառեր կամ հիմնական ձևույթներ՝ առաջ բերելով հազարավոր բարդ բառեր:

Ա. Մեյեն հնարավոր է համարում հայերենի ա հոդակապի ծագման երկու ուղի. ա-ն համարել որպես բարդ բառերի առաջին եզրի անհրաժեշտ մաս, և երկրորդ՝ հայերենի կատարած փոխառությունների արդյունք, որոնք զգալի չափով օժանդակած պետք է լինեն ա տարրի՝ որպես բարդ բառերի հոդակապի ընդհանրացմանը[4]:

Հայերենի ա հոդակապի մասին երկու կարծիք կա. **նախ՝** այն, որ այդ հոդակապը առաջացել է ա հոլովման բնի ձայնավորից, **երկրորդ՝** ա հոդակապն առաջացել է պարսկերենից փոխառյալ բառերի ազդեցությամբ: Հր. Աճառյանը ընդունում է առաջին տարբերակը՝ մատնանշելով **մետասան** և **մեկնել** բառերը, որոնք ծագում են միատասան և միակինել ձևերից, որոնք ունեն ա հոդակապը: Այսպիսով, ա-ն, որ բնի վերջին ձայնավորն է, դառնում է հոդակապ[5]:

Մ. Աբեղյանը ևս ա հոդակապը, բխեցնելով բառաբնի վերջին ձայնավորից, միաժամանակ նշել է, որ դա «անալոգիայով անցել է և այնպիսի բառերի բարդության, որոնք «ա» ձայնավորով բուն չունին»[6]:

Այսպիսով՝ սերելով բառաբնի ձայնավորից և ունենալով շատ հին ծագում, ա հոդակապը բառակազմական ընդհանրական արժեք է ստացել և բավական մեծ դեր է խաղում հայոց լեզվի բառապաշարի հարստացման գործում:

---

4 Տես **Մեյե Ա.**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 792:

5 Տես **Աճառյան Հր.,** Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 3-րդ, Եր., 1957, էջ 131:

6 **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 190-192:

Սակայն ա հոդակապը բոլոր տեսակի բառերից կամ ձևույթներից չէ, որ նոր բառեր է կազմում կամ բարդության բաղադրիչներն իրար հետ կապում: Ա հոդակապը հանդես է գալիս բաղաձայնով սկսվող բաղադրիչից առաջ, օրինակ՝ գրատախտակ, դասամատյան, ժամացույց, լեզվագետ, շինանյութ և այլն:

Ի ձայնավորով վերջացող բառերին հաջորդելու դեպքում նրա հետ միանալով՝ ի+ա օրինաչափական հնչյունափոխությամբ դառնում է ե, օրինակ՝ այգեգործ (<այգի+ա+գործ), այգեստան (<այգի+ա+ստան), գինեվաճառ, տարեդարձ, ուղեգիր և այլն:

Յուրաքանչյուր խոսքի մաս այդ բարդությունների կազմությանը մասնակցում է իր ընդգրկած բառերի քանակով, բառիմաստների, խոսքիմասային իմաստի ու արժեքի, ձևաբանաշարահյուսական կարգերի ու գործառական դերի համապատասխան:

Նախ դիտարկենք **գոյական** վերջնաբաղադրիչով մասնակաղապարները.

NjN (գոյ.+հոդ.+գոյ), օրինակ՝ արևածաղիկ, զորահանդես, հողակտոր, ձեռնափայտ, քարակույտ և այլն,

<u>N</u>jN, օրինակ՝ լուսանկար, ծաղկաման, ծաղկափոշի և այլն,

AjN, օրինակ՝ հարթավայր, մանրանկար, նորահարս և այլն,

NmjN, օրինակ՝ հնգամարտ, միլիոնատեր, տասնապետ և այլն,

PrjN, օրինակ՝ ինքնագաղափար, ինքնագլուխ, ինքնադիմանկար և այլն,

VjN–այս մասնակաղապարում բայական բաղադրիչը հանդես է գալիս տարբեր դրսևորումներով: Դրանք են՝

ա) իբրև բայարմատ, որ հիմնականում համընկնում է ներկայի հիմքին, օրինակ՝ աշխատաժամ, աշխատավայր, լսափող, ննջասենյակ, ճեմասրահ և այլն,

բ) բայարմատը համընկնում է երկրորդ հիմքին, օրինակ՝ ելագիծ, ելակետ, տեսադաշտ, տեսակետ և այլն,

գ) բայահիմք (երկրորդ հիմք), օրինակ՝ լվացատեղ, հայեցադաշտ, հայեցակարգ, հայեցակետ, ստացագիր և այլն,

դ) դերբայ, օրինակ՝ խոսելաձև, խոսելակերպ, խոսելառձ, վառելափայտ:

SjS հիմնակաղապարի մեկ այլ մասնակաղապար են ներկայացնում այն բարդությունները, որոնց վերջին բաղադրիչը բայական անդամ է: Ընդ որում նման բարդություններում վերջին բաղադրիչը հանդես է գալիս երկու ձևով՝ բայարմատով կամ բայահիմքով: Եթե հաշվի առնենք կառուցվածքային այս նրբությունները, մասնակաղապարը պետք է ներկայացնենք հնարավոր տարբերակներով:

Բայական բաղադրիչով երկհիմք հոդակապով բարդություններն ունեն հետևյալ մասնակաղապարները.

NjV (գոյ.+հոդ.+բայ), օրինակ՝ ակնաբույժ, ատամնաբույժ, դասախոս, լարախաղաց, լեռնագնաց և այլն,

AjV, օրինակ՝ հնագետ, ուղղաթիռ և այլն,

PrjV– (դեր. +հոդ. +բայ), օրինակ՝ ինքնաեռ, ինքնաթիռ, ինքնահոս և այլն:

Սերող հիմքը բաղադրության գերադաս անդամն է, բաղադրող հիմքը՝ ստորադաս: Բարդության բաղադրիչներն արտահայտում են ստորոգյալի և ուղիղ խնդրի շարահյուսական հարաբերություն: Այս բարդության հիմնակաղապարը կլինի (SjS) jS բանաձևը (տվյալ դեպքում անտեսում ենք բաղադրիչների հնչյունափոխության գործոնը):

(SjS) jS հիմնակաղապարը վերաբերում է բոլոր այն բարդություններին, որոնց բաղադրող հիմքերը հոդակապով երկարմատ բարդություն են, իսկ սերող հիմքերը՝ պարզ արմատ կամ բայահիմք[7]:

Ինչպես ցույց է տալիս բարդության հիմքերի իմաստային վերլուծությունը, բաղադրող հիմքերի բաղադրիչներն իմաստային ավելի սերտ կապեր ունեն:

Եռաբաղադրիչ իսկական բարդությունները բաժանվում են երկու խմբի. առաջին խմբի բարդություններում սերող հիմքը միաբաղադրիչ է (արմատական բառ կամ բայահիմք) և գտնվում է բարդության վերջում, երկրորդ խմբի բարդություններում՝ երկբաղադրիչ, որ դարձյալ գտնվում է բարդության վերջում:

Առաջին խմբի բարդությունների հիմնակաղապարն է (SjS) jS, իսկ երկրորդ խմբինը՝ Sj (SjS):

Դիտարկենք այդ կարգի բարդություններն առանձին-առանձին:

1) (SjS) jS կառուցվածքի բարդություններում վերջին միաձևույթ բաղադրիչը հանդես է գալիս իբրև բարդության գերադաս անդամ: Նման բարդությունների հիմնակաղապարի մասնակաղապարները պայմանավորված են ինչպես բարդության բաղադրիչների հնչյունափոխությամբ, այնպես էլ խոսքիմասային արժեքներով:

Կարելի է առանձնացնել հետևյալ մասնակաղապարները.

(Nj<u>V</u>) jV–ազգագրագետ,

(<u>NjN</u>) jV–գարեջրավաճառ,

(<u>V</u>j<u>V</u>) jN–գծագրասեղան,

(<u>A</u> j A) jN–զուգահեռագիծ,

(Nj<u>V</u>) jN–ժամադրավայր,

(Aj<u>V</u>) jN–հեռագրասյուն,

(AjV) jN–հեռախոսագիրք:

2) Sj (SjS) հիմնակաղապարում երկրորդ բաղադրիչն է հանդես գալիս որպես բարդության գերադաս անդամ: Այդ կարգի բարդությունների մասնակաղապարներն են՝

<u>A</u>j (NmjN)– բազմամիլիոնատեր,

<u>N</u>j (<u>V</u>jV)– գրաքննադատ,

Nj (NjV)– զորահրամանատար,

<u>N</u>j (AjV)– լուսահեռագիր,

<u>N</u>j (NjN)– պղնձահանքաշերտ,

Nj (<u>N</u>jV)– օդալուսանկար:

Թե՛ առաջին, թե՛ երկրորդ խմբի որոշ կաղապարներ կարող են երկակի մեկնաբանություն ստանալ: Հմմտ. հեռախոսափող > հեռ(ա)+խոսափող և

7 Տես **Խաչատրյան Լ.,** Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Եր., 2011, էջ 21:

հեռախոս + ա+ փող, պղնձահանքաշերտ > պղ(ի)նձ + ա+ հանքաշերտ և պղնձահանք+ա+շերտ և այլն:

3)Ժամանակակից հայերենում հազվադեպ հանդիպում են քառաբաղադրիչ բարդություններ, որոնց բաղադրիչները սովորաբար միանում են երկու կամ երեք հոդակապով: Հմմտ. այգեպտղաբանջարաբույծ, լուսավիմագրատուն, ծծմբաջրածնաջուր, հեռագրասյունաշար, օդատիեզերագնաց, ֆոտոհեռագրատուն և այլն:

Ելնելով բարդության բաղադրիչների խոսքիմասային արժեքներից և կրած հնչյունափոխությունից՝ կարելի է ներկայացնել դրանց մասնակաղապարները:

Այսպես,

1.(Sj SjS) jS հիմնակաղապարը կունենա՝

ա) (N j N jV) jN–ծծմբաջրածնաջուր,

բ) (AjV jN) jN– հեռագրասյունաշար,

գ) (NjN jN) jV– այգեպտղաբանջարաբույծ,

դ) (NAj V) jN– ֆոտոհեռագրատուն:

2.Sj (SSjS) հիմնակաղապարը կունենա՝

ա) Nj (ANjV)– օդատիեզերագնաց,

բ) Nj (N jV jN)– լուսավիմագրատուն:

3. (SS) jSS հիմնակաղապարը կունենա՝

(AN) jNV– տիեզերահրթիռ:

3.Անհոդակապ բարդությունների կաղապարներ

Անհոդակապ են կոչվում այն բարդությունները, որոնց բաղադրիչները առանց հոդակապի են միանում իրար և միասին լայն ու ընդհանուր նշանակություն են արտահայտում: Անհոդակապ բարդությունները հոդակապովներից ոչ թե էությամբ կամ բովանդակությամբ, այլ սոսկ ձևով՝ հոդակապի բացակայությամբ են տարբերվում: Սրանք ոչ թե ամեն տեսակ, այլ այնպիսի բառերից, արմատներից կամ ձևույթներից են կազմվում, որոնք իրար հետ առանց հոդակապի միանալու և մի ընդհանուր բառային նշանակություն արտահայտելու հիմքերով են օժտված:

Որպես երկհիմք (երկբաղադրիչ) բարդություններ՝ անհոդակապ կազմություններն ունեն հետևյալ կաղապարը՝ SS: Այս կաղապարի բաղադրիչներ են դառնում գոյական, ածական, թվական, դերանուն, կապ խոսքի մասերը և բայահիմքերը: Ըստ բաղադրիչների խոսքիմասային արժեքների՝ կարելի է արտածել SS հիմնակաղապարի հետևյալ մասնակաղապարները՝

ա) NN– գոյականական բաղադրիչներով մասնակաղապարը կարող է ունենալ իր ենթակաղապարները, որոնք պայմանավորված են այն հանգամանքով, որ նման մասնակաղապարներում միևնույն գերադաս անդամով կազմվում են ամբողջական բառաշարքեր, օրինակ՝

ման բաղադրիչով՝ զարդաման, թեյաման, կրակաման, ձիթաման, նավթաման, ջրաման, սրճաման և այլն,

անուն բաղադրիչով՝ ազգանուն, բայանուն, բուսանուն, լեռնանուն, հայրանուն, տառանուն, տեղանուն և այլն,

երգ բաղադրիչով՝ խմբերգ, մահերգ, պարերգ, սիրերգ, վերջերգ, վիպերգ, օրհներգ և այլն,

ուղի բաղադրիչով՝ երկաթուղի, խաչուղի, ծառուղի, ճոպանուղի, մայրուղի, նավուղի, շնչուղի և այլն,

բ) NV. գոյական+բայահիմք մասնակաղապարներում գերադաս բաղադրիչի դերով հանդես է գալիս բայի առաջին կամ երկրորդ հիմքը, ինչպես՝

1. առաջին հիմքով բաղադրված կաղապարներ.

խոտհունձ, ձեռնպահ, ջրկիր, սրճեփ, ունկնդիր, փողկապ և այլն:

2.Երկրորդ հիմքով բաղադրված կաղապարներ[8].

ողբասաց, ջրաղաց, հողմաղաց, տաղասաց և այլն:

ա) Բարդություններ, որոնք նախապես ունեցել են **ա** հոդակապը և հետո կորցրել այն: Դրա լավագույն ապացույցը նույն բառի զուգահեռ՝ հոդակապով և անհոդակապ ձևերն են, օրինակ՝ աղաջուր–աղջուր, բանաբեր–բանբեր, հրաձիգ–հրձիգ, մաճակալ–մաճկալ, ջրագնաց–ջրգնաց և այլն:

բ) Բարդություններ, որոնք ավանդված են կամ գործածվում են միայն մեկ՝ անհոդակապ ձևով, օրինակ՝ արևմուտք, հրշեջ, ձկնկիթ, ճակնդեղ, մկնդեղ և այլն:

գ) Բարդություններ, որոնք առաջ են եկել կցականներից՝ իմաստային փոփոխությամբ ստանալով մի նոր, ավելի լայն նշանակություն, օրինակ՝ շաքարկոտրիչ, ունկնդիր, փայտփորիկ, փլավքամիչ և այլն:

դ) Բարդություններ, որոնք առաջ են եկել հայոց լեզվի զարգացման խորհրդային շրջանում ռուսերենի ազդեցությամբ՝ փոխառությունների կամ բառապատճենումների ճանապարհով, օրինակ՝ կինոմեխանիկ, ռադիոհաղորդում, ռադիոճառագայթ, ֆոտոժապավեն, ֆոտոխցիկ և այլն:

Նշենք, որ անհոդակապ բարդությունների մեջ ընդգրկել ենք նաև այն կաղապարները, որոնք ավանդական լեզվաբանությունը անվանում է կցական բարդություն:

Սրանք ևս նշանակել ենք SS հիմնակաղապարային բանաձևով: Օրինակ՝

ա) Տարբեր բառերի սովորական շարահյուսական կապակցություններով կազմված, ինչպես՝ գլուխգործոց (<գլուխ+գործոց), տանտիկին (<տան+տիկին) և այլն: Սրանք կարող են արտահայտել նաև որոշիչ – որոշյալ հարաբերություն, օրինակ՝ տղամարդ, հատկացուցիչ–հատկացյալ հարաբերություն, օրինակ՝ հորեղբայր, մորեղբայր, տանտեր, տանտիկին, քեռայր, քեռորդի և այլն[9]:

բ) Բաղհյուսական բարդություններից, որոնք մեկ բառական միություն են ըմբռնվում և նոր բառերի համանմանությամբ դրանց բունը միացած է գրվում, օրինակ՝ այբուբեն, այրուձի, սկզբնապես՝ այր ու ձի, գրաբարում

8 Տես **Խաչատրյան Լ.,** Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Եր., 2011, էջ 25:

9 Տես **Եզեկյան Լ.**, Հայոց լեզու, Եր., 2005, էջ 192–196:

հոլովվում է առն և ձիոյ, անցուդարձ, առևտուր, որը նշանակում է առնել ու տալ, ասուլիս և այլն[10]:

գ) Անվանական հարադրություններից, ինչպես նաև բայական հարադրություններից, օրինակ՝ բացթողում, ետդարձ, իրարանցում, կահկարասիք, մեջբերում և այլն:

Գոյականական համադրական բարդությունների կաղապարների բաղադրիչները միմյանց հետ կարող են կապակցվել համադասական և ստորադասական հարաբերությամբ: Համադասական բարդությունների բաղադրիչները կապակցված են համադասական հարաբերությամբ, այսինքն՝ կամ իրար նկատմամբ կախման մեջ չեն գտնվում, կամ գտնվում են փոխլրացական կախման մեջ:

Համադրական բարդությունների դեպքում բաղադրիչների միջև վերանում են սահմանային ազդանշանները, և դրանք գրվում ու արտասանվում են իբրև մեկ բառ:

Համադասական հարաբերություններ են արտահայտում, օրինակ՝ անցուդարձ, առևտուր, ասուլիս և այլն:

Համադասական հարաբերությունն ընդհանրապես արտահայտում է հավելական իմաստ, բայց կարող է արտահայտել նաև լրացուցիչ այլ իմաստներ՝ ամբողջության, հասանելիության և այլն:

Համադասական հարաբերությամբ գոյականներ են կազմվում.

ա) գոյականների միացությամբ՝ այրուձի, տանտեր, տանտիկին և այլն,

բ) բայարմատների միացությամբ՝ առևտուր, անցուդարձ, ասուլիս և այլն:

Ստորադասական հարաբերություններ են արտահայտում անվանական կամ բայական հարադրություններից առաջ եկած այն բարդությունները, որոնց բաղադրիչները նախապես իբրև լրացում ու լրացյալ կամ նախադասության գլխավոր ու երկրորդական անդամ են գործածվել, օրինակ՝ աղջիկտես, մայրցամաք, տանտիկին և այլն[11]:

Ժամանակակից հայերենը հարուստ է կրկնություններով, որոնք բնութագրվում են ծագումնային և հնչակաղապարային տարատեսակությամբ: Ծագումնային առումով ժամանակակից հայերենի կրկնությունները բազմաշերտ են՝ գալով ժամանակագրական տարբեր փուլերից: Հնդեվրոպական շրջանից եկող և դրանց նմանությամբ հնդեվրոպական շրջանում կազմված բառերի համար բնորոշ է մասնական կրկնությունը, որ հաճախ ուղեկցվում է ձայնորդային հերթագայությամբ և երբեմն վերջահավելական տարրերով՝ աճականներով, օրինակ՝ բարբառ, բողբոջ, գրգիռ, թիթեռ և այլն:

Առաջին հայացքից կարծես թե կրկնության անդամները հավասարարժեք են, սակայն իրականում դրանցից մեկը կրկնության հիմքն է, մյուսը՝ նմանակը: Կոչենք կրկնության հիմնական անդամը **կրկնյալ,** նմանակը **կրկնորդ:** Կրկնությունների գերակշռող մեծամասնության մեջ կրկնյալն առաջին բաղադրիչն է, բայց մի շարք դեպքերում իբրև այդպիսին հանդես

---

10 Տես **Աբեղյան Մ.,** Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 170–200:

11 Տես **Ջահուկյան Գ.,** Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 224:

է գալիս երկրորդ բաղադրիչը: Այսպիսով, առկա է կրկնության տիպ՝ SS_1 և S_1S, որոնց մեջ S-ով նշանակված է կրկնյալը, S_1-ով՝ կրկնորդը: Ի տարբերություն ածանցումների և բարդությունների՝ կրկնությունների մեջ սովորաբար փոփոխության է ենթարկվում ոչ թե հիմքային բաղադրիչը՝ կրկնյալը, այլ հավելական բաղադրիչը՝ կրկնորդը:

Ժամանակակից հայերենում կրկնության գործուն տիպը SS_1-ն է: Այն լինում է նույնական կամ անփոփոխ կրկնորդով և փոփոխվող կրկնորդով[12]:

Նույնական կարող են լինել ինչպես ձայնավորով, այնպես էլ բաղաձայնով սկսվող արմատներով կրկնությունները, օրինակ՝ աղաղակ, բիբի, թրթրակ, թրթուր, փրփուր:

Ր /ռ՝ (<r-rs)՝ բարբառ, բողբոջ, դողդոջ, կարկաչ:

Մի շարք դեպքերում r-ի դրափոխությունը խախտել է հնդեվրոպական կրկնության կաղապարը՝ կարկուտ, կորկոտ, տարտամ[13]:

Այսպիսով՝ համադրական բարդությունների կաղապարների տեսակներն են անհոդակապ և հոդակապով բարդությունների կաղապարները, որոնք ունեն համադասական ու ստորադասական հարաբերություն և մեծ կշիռ ունեն ժամանակակից հայոց լեզվի բառակազմական կաղապարների համակարգում:

Summary

THE STEREOTYPES OF NOUN ANALYZING DIFFICULTIES

Ruzan H. Virabyan

The article concerns the stereotypes of analyzing difficulties in Armenian language with their types and stereotype formula, which have subordinate and coordinative relation, and they have their individual place in the stereotypes of modern Armenian word building system.

12 Տես **Զահուկյան Գ.**, նույն տեղում, էջ 215:

13 Տես **Զահուկյան Գ.,** Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 250: